Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 29-06-2021 թ. որոշմամբ
«ԱՐՄԵՆԱԿ ԵՎ ԱՆՆԱ ԹԱԴԵՈՍԵԱՆՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱՐՄԵՆԱԿ ԵՎ ԱՆՆԱ ԹԱԴԵՈՍԵԱՆՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ Ե.Կողբացու 28 72
1.3 Պետական գրանցման համարը		222.160.733033
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2012-10-11
1.5 ՀՎՀՀ-ն		02612236
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)43759545
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		mkhchyan@mail.ru
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	48	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Արտահիվանդանոցային ծառայություն	5296982
	Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ	6039000
	Սոցիալապես անապով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնություն	71998417
	Սուբսիդիա	276000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		

	Զեռնարկատիրական գործունեություն	1157910
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Զեռնարկատիրական գործունեություն	14575463
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	0	0
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
	հենասայլակներ	7545380
	դեղեր	249156
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Արտահիվանդանոցային ծառայություն	5296982	
Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ	6039000	
Սոցիալապես անապով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնություն	71998417	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	109730657	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	83334399	

Նշումներ՝

Կից ներկայացվում է 2020թ ֆինանսական հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 19 թերթից:
թերթերի քանակը

Digitally signed by KOLOYAN ZAVEN 3402850060

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

"Արմենակ և Աննա Թադեոսեանների Բժշկական Կենտրոն" Հիմնադրամ
Ֆինանսական հաշվետվություններ
առ 31 դեկտեմբեր 2020թ

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԴԻՏԱՐԿՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....5
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....6
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ....7
1. Ընդհանուր տեղեկությունների....7
2 . Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները....8
3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը....9
4. Հիմնական միջոցներ....18
5. Դրամական միջոցներ....18
6. Ակտիվներին վերաբերող շնորհներ....19

ԱՆԿԱԽ ԴԻՏԱՐԿՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

"Արմենակ և Անետ Թադեոսեանների Բժշկական Կենտրոն" Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին

Կարծիք

Մենք իրականացրել ենք "Արմենակ և Անետ Թադեոսեանների Բժշկական Կենտրոն" Հիմնադրամի կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների դիտարկումը 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, որը ներառում է 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները՝ 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացված, կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Այս ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Անկախ դիտարկողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված դիտարկման արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք դիտարկումն իրականացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և դիտարկման աշխատանքները պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Դիտարկման աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել համապատասխան ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են անկախ դիտարկողի դատողությունից, ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս անկախ դիտարկողը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Դիտարկման աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության,

ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված համապատասխան ապացույցները բավականաչափ են և համապատասխանում են մեր դիտարկման եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Անկախ դիտարկող _____ Գ. Սիսոյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

	Ծնթ.	31.12.2020թ. հազ.դրամ	31.12.2019թ. հազ.դրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	607,824	650,031
Ոչ նյութական ակտիվներ		215	87
		608,039	650,118
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		16,484	5,758
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	8,573	3,669
Դրամական միջոցներ	6	13,111	23,498
		38,168	32,296
Ընդամենը ակտիվներ		646,207	683,043
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ/(վնաս)		47,263	44,698
		47,263	44,698
Ոչ Ընթացիկ պարտավորություններ			
Ստացված վարկեր, փոխառություններ		11,250	-
Ակտիվներին վերաբերվող շնորհներ	7	571,045	632,336
		582,295	632,336
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փոխառություններ		2,600	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	8	8,354	5,090
Շահութահարկի գծով պարտավորություն		559	919
Եկամուտներին վերաբերող շնորհներ		5,136	-
		16,649	6,009
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		646,207	683,043

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

	2020թ. հազ.դրամ	2019թ. հազ.դրամ
Ծառայություններից իրացումից հասույթ	103,114	112,953
Ինքնարժեք	(20,968)	(12,159)
Համախառն շահույթ/(վնաս)	**82,146**	**100,795**
Իրացման ծախսեր	-	(41,373)
Վարչական ծախսեր	(79,318)	(101,523)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)	**2,828**	**(42,101)**
	2,828	**(42,101)**
Գործառնական այլ եկամուտներ	64,800	51,562
Գործառնական այլ ծախսեր	(64,504)	(922)
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը	3,124	**8,538**
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(559)	(1,638)
Տարվա շահույթ/(վնաս)	**2,565**	**6,900**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը համապարփակ արդյունք	**2,565**	**6,900**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր տեղեկությունների

1.1 Կազմակերպությունը և հիմնական գործունեությունը

«Արմենակ և Անետ Թադեոսեանների բժշկական կենտրոնե Հիմնադրամը իրականացնում է «ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ և հարակից համայնքների, ժամանակակից պայմաններին համապատասխան՝ որակյալ բժշկական օգնություն ցուցաբերելու ծրագիրը, «Արագածոտնի մարզի Կոշ համայնքում խնամքի առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար նախատեսված ցերեկային խնամքի կենտրոնի՝ կից վերականգնողական ամբողջական թերապիան ծրագիրը, ինչպես նաև «Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության սպասարկումն ծրագիրը:

1.2 Հայաստանի Հանրապետության գործարար միջավայրը

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Հիմնադրամի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գնահատականն Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) լայն աշխարհագրական տարածումը հաշվեկշռային ժամանակահատվածում և դրա ներխուժումը ՀՀ տարածք, ինչպես նաև Հայաստանի ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից մինչև ապրիլի 14-ը արտակարգ դրություն սահմանելու մասին ՀՀ Կառավարության որոշումը զգալի ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա: Համավարակի կանխարգելմանն ուղղված միջոցառումների անցկացման՝ այդ թվում ճանապարհորդության արգելման, կարանտինի, ոչ հիմնական ծառայությունների մատուցման ժամանակավոր արգելման հետևանքով բազմաթիվ ընկերություններ և անհատներ հարկադրված են եղել երկարաժամկետ կամ անորոշ ժամանակահատվածով սահմանափակել կամ դադարեցնել իրենց գործունեությունը, ինչի հետևանքով ՀՀ Կառավարությունը ձեռնարկել է տնտեսական միջոցառումների ծրագրեր՝ համավարակի տնտեսական ազդեցության չեզոքացման նպատակով: Համաճարակի հետագա տևողությունը և ազդեցությունը, ինչպես նաև հիմնախնդրի հաթահարմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը այս պահին շարունակում են մնալ անորոշ:

Ի լրումն, 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմն ընդդեմ Արցախի հանրապետության ստեղծել է քաղաքական և տնտեսական ճգնաժամերի էական նախադրյալներ, որը որպես հետևանք առաջացրել է դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքի արժևորման ներդրողների ընդհանուր տրամադրվածության նվազման և ֆինանսական շուկաներում անորոշությունների և տատանումների ավելացման:

Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Հիմնադրամը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Հիմնադրամի գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման

հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Հիմնադրամի հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

2 . Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Կազմակերպությունը հաշվապահական հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան, հաշվապահական գրանցումներն ըստ անհրաժեշտության ճշգրտվել են՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: ՖՀՄՍ-ները Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից ընդունված Ստանդարտները և Մեկնաբանություններն են, որոնք ներառում են.

ա) Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտները (IFRS),

բ) Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտները (IAS),

գ) Մեկնաբանությունները՝ թողարկված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների Մեկնաբանությունների Կոմիտեի կողմից:

2.2 Անընդհատության սկզբունք

Կազմակերպության ղեկավարությունը, հիմնվելով կատարված դատողությունների վրա, ունի հիմնավորված ակնկալիք, որ Կազմակերպությունը կարող է շարունակել իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում: Ուստի Կազմակերպությունը շարունակում է որդեգրել անընդհատության սկզբունքը իր ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ Դրամ): Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Վերադասակարգում

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

2.5 Դիտողությունների, գնահատականների և ենթադրությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Կազմակերպության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը և պայմանական ակտիվների և պարտավորությունների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումները և ենթադրությունները վերանայվում են

շարունակաբար: Հաշվապահական գնահատումների փոփոխությունները ճանաչվում են փոփոխման և հետագա ժամանակաշրջաններում:

2.6 Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ

Նոր կամ փոփոխված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառում

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ
Առկա չեն նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2020 թվականի հունվարի 1-ից:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ
Առկա չեն նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Հիմնադրամի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս նշանակալի հարցերի նկատմամբ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.1 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա)արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,

բ)արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու -ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքներում:

3.2 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.

- դեբիտորական պարտքեր,
- կրեդիտորական պարտքեր,
- դրամական միջոցներ

- Տրված փոխառություններ:

Դեբիտորական, կրեդիտորական պարտքերը և փոխառությունները չեն դասակարգվում որպես իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ, որոնց փոփոխությունը արտացոլվում է ժամանակաշրջանի շահույթում և վնասում:

Դրամական միջոցները կազմված են դրամարկղի և հաշվարկային հաշիվների մնացորդներից:

3.2.1 Ճանաչումը և սկզբնական չափումը

Ֆինանսական գործիքները ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ Կազմակերպությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքները չափվում են փոխհատուցման իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ անմիջականորեն կապված ծախսումները: Կարճաժամկետ (մինչև տասներկու ամիս մարման ժամկետ ունեցող) դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հավասար է համապատասխան գործարքի գնին, այսինքն՝ դեբիտորական (կրեդիտորական) պարտքի դիմաց ստացման (վճարման) ենթակա դրամական միջոցների անվանական գումարին, եթե գեղչման ազդեցությունը էական չէ:

3.2.2 Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո դեբիտորական, կրեդիտորական պարտքերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը դա այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվել էր սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով և հանած արժեզրկման զծով դուրս գրված ցանկացած գումար:

3.2.3 Ֆինանսական գործիքների ապաճանաչումը

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ.

ա) լրանում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պահանջի պայմանագրային իրավունքների ժամկետը, կամ

բ) Կազմակերպությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը և եթե այդ փոխանցումը համաձայն ՀՀՍՄ 39-ի համարվում է ապաճանաչում:

Ֆինանսական պարտավորությունը (կրեդիտորական պարտքերը, ստացված վարկերը և փոխառությունները) դուրս է գրվում այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը (հայցային վաղեմության ժամկետը):

3.3 Հիմնական միջոցներ

3.3.1 Ճանաչումը և սկզբնական չափումը

Հիմնական միջոցների միավորը ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

ա) ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Կազմակերպություն, և

բ) դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը՝ հանած առևտրային զեղչերը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները:

Սեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը ներառում է նյութերի և աշխատուժի ծախսումները, ինչպես նաև արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը: Ներքին շահույթները և նյութերի, աշխատուժի և այլ ծախսումների նորմալ մակարդակից բարձր ծախսումները կառուցվող ակտիվի սկզբնական արժեքի մեջ չեն ներառվում: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը, հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են ինքնարժեքով:

3.3.2 Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի միավորի վրա կատարված հետագա ծախսումները ավելացվում են հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ կհոսեն դեպի Կազմակերպություն, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից: Մյուս բոլոր դեպքերում ծախսումները ճանաչվում են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր:

3.3.3 Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

3.3.4 Մաշվածություն

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը և/կամ հաշվի առնելով հիմնական միջոցների տվյալ խմբի ամորտիզացիոն տարեկան առավելագույն տոկոսադրույքը: Ցուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված մաշվածության գումարը ճանաչվում է որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Հիմնական միջոցների տարեկան ամորտիզացիոն մասհանումների չափերը որոշվել են համաձայն Շահութահարկի մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի:

Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված (կառուցված, մշակված) ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիոն մասհանումները.

Հիմնական միջոցների խմբեր	Ամորտիզացիոն մասհանումներ / տարիներով /
Շենքեր և կառուցվածքներ	20 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	1 տարի
Այլ հիմնական միջոցներ	5 տարի

2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերվող (կառուցվող, մշակվող) ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիոն մասհանումները.

2014թ. Հիմնական միջոցների ձեռք բերման դեպքում, գործում է ամորտիզացիայի մասհանումների հաշվարկը համաձայն ստորև նշված տոկոսադրույքների համաձայն 238-Ն ՀՀ Կառավարության որոշման առ 19.12.2012թ.

Հիմնական միջոցների խումբ	Ամորտիզացիոն տարեկան առավելագույն տոկոսադրույք
Հյուրանոցներ, պանսիոնատներ, հանգստյան տներ, առողջարաններ, կրթական և ուսումնական հաստատությունների շենքեր և շինություններ	15%
Այլ շենքեր և շինություններ, փոխանցող հարմարանքներ	7.5%
Հոսքային գծեր և ռոբոտատեխնիկա	50%
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	100%
Այլ հիմնական միջոցներ (այդ թվում՝ բանող անասուններ, բազմամյա տնկիներ և հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումներ)	30%

3.4 Վարձակալված ակտիվներ

Վարձակալություն

Բոլոր վարձակալությունները հաշվառվել են օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և վարձակալական պարտավորության ճանաչման միջոցով, բացառությամբ՝

- վարձակալությունների, որոնց հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է, և
- կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս և պակաս ժամկետով)

Վարձակալական պարտավորությունները չափվում են վարձակալության ժամկետի ընթացքում կատարվող պայմանագրային վարձավճարների ներկա արժեքով, զեղչված վարձակալությամբ ենթադրվող դրույքով, եթե այդ դրույքը հնարավոր է հեշտությամբ որոշել: Եթե ոչ (սովորաբար պատահող դեպքեր), հաշվարկը կատարվում է կիրառելով վարձակալի կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքով: Վարձակալության փոփոխուն վճարումները ներառվում են վարձակալական պարտավորության հաշվարկում միայն եթե նրանք կախված են ինդեքսից կամ դրույքից: Այս դեպքում վարձակալական պարտավորության սկզբնական չափումը ենթադրում է այն, որ փոփոխուն մասը մնալու է կայուն վարձակալական ժամկետի ընթացքում: Այլ վարձակալական փոփոխուն վճարումները համարվում են ժամանակաշրջանի ծախսեր:
Սկզբնական ճանաչման ամսաթվին վարձակալական պարտավորության հաշվեկշռային արժեքը ներառում է նաև.

- գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո,

- գնման օպցիոնի իրագործման գին, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը,
- վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սկզբնապես չափվում են վարձակալական պարտավորության չափով, հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները և գումարած հետևյալը.

- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները
- վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, և
- այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվն ապամոնտաժելիս կամ քանդելիս:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալական պարտավորությունը աճում է մնացորդը վրա հաշվարկված տոկոսագումարների չափով և նվազում է վարձակալի կողմից կատարված վարձավճարների չափով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի կամ ակտիվների օգտակար ծառայության ժամկետի (եթե վերջինս ավելի կարճ է, քան վարձակալության ժամկետը) ընթացքում:
Երբ Կազմակերպությունը վերանայում է վարձակալության ժամկետի իր գնահատականը (օրինակ՝ Կազմակերպությունը վերագնահատում է վարձակալի կողմից վարձակալության ժամկետի երկարացման կամ վաղաժամ դադարեցման հավանականությունը), Կազմակերպությունը ճշգրտում է վարձակալական պարտավորության հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու կատարվող վարձավճարները վերանայված ժամկետի ընթացքում, որոնք գեղչվում են նույն դրույքով, որը որոշվել էր վարձակալության սկզբում: Վարձակալական պարտավորության հաշվեկշռային արժեքը նման ձևով վերանայվում է, երբ ապագա վարձավճարների փոփոխուն մասը, որը հիմնված է ինդեքսի կամ դրույքի վրա, նույնպես վերանայվում է: Երկու դեպքում էլ կատարվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի համապատասխան ճշգրտում, որը (ակտիվը) ամորտիզացվում է վարձակալության մնացած (վերանայված) ժամկետի ընթացքում:
Երբ Կազմակերպությունը վարձատուի հետ վերափոխում է վարձակալության պայմանները, վարձակալի հաշվառումը կարող է փոփոխվել կախված նշված փոփոխության կամ փոփոխությունների բնույթից.

- Վարձակալը պետք է հաշվառի վարձակալության վերափոխումը որպես առանձին վարձակալություն, եթե վերափոխման արդյունքում մեծանում է վարձակալության գործողության ոլորտը՝ ավելացնելով մեկ կամ մեկից ավելի հիմքում ընկած ակտիվների օգտագործման իրավունք:
- Բոլոր մյուս դեպքերում, երբ վերափոխումը ավելացնում է վարձակալության գործողության ոլորտը (վարձակալության ժամկետի երկարացման կամ մեկ կամ մեկից ավելի հիմքում ընկած ակտիվների ավելացման միջոցով) վարձակալական պարտավորությունը վերաչափվում է վերափոխման ամսաթվի դրությամբ որոշված գեղչման դրույքի կիրառմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ճշգրտվում է նույն գումարով:
- Եթե վերափոխման արդյունքում վարձակալության գործողության ոլորտը նվազում է վարձակալական պարտավորության հաշվեկշռային արժեքը և օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվում են հավասար հարաբերակցությամբ՝ արտացոլելու վարձակալության մասնակի կամ ամբողջությամբ դադարեցումը:

Տարբերությունը ճանաչվում է եկամուտների և ծախսերի հաշվետվությունում: Վարձակալական պարտավորությունը դրանից հետո ճշգրտվում է նաև, որպեսզի նրա հաշվեկշռային արժեքը արտացոլի վերափոխված ժամկետի ընթացքում կատարվելիք վերափոխված վարձավճարները զեղչված վերափոխման ամսաթվի դրությամբ որոշված դրույքով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը ճշգրտվում է նույն գումարով:

3.5 Պաշարներ

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռքբերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Պաշարների հնարավոր իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է Առաջինը մուտք՝ առաջինը ելք (ՖԻՖՈ) բանաձևով:

3.6 Արժեզրկում

Կազմակերպության ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա= է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվների փոխհատուցվող գումարները:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, որպես տվյալ ժամանակաշրջանի ծախս:

3.6.1 Փոխհատուցվող գումարի հաշվարկ

Կազմակերպության մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների և դեբիտորական պարտքերի փոխհատուցվող գումարը հաշվարկվում է ակնկալվող դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքով՝ զեղչված ակտիվին բնորոշ սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերը չեն զեղչվում:

Մյուս ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս՝ դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է այդ ակտիվը:

3.6.2 Արժեզրկումից կորուստների հակադարձում

Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետ:

Այլ ակտիվների գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոփոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործված գնահատականները:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ համապատասխան մաշվածություն կամ ամորտիզացիա հաշվարկելուց հետո, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

3.7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները (անհավաքագրելիության պահուստը): Դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստ ստեղծվում է, երբ առկա է օբյեկտիվ վկայություն, որ կազմակերպությունը ի վիճակի չի լինի ժամանակին հավաքագրել բոլոր գումարները՝ դեբիտորական պարտքերի առաջացման սկզբնական պայմաններին համապատասխան: Որպես դեբիտորական պարտքի արժեզրկման հնարավոր հայտանիշներ են ընդունվում դեբիտորի նշանակալի ֆինանսական դժվարությունները, նրա սնանկացման մեծ հավանականությունը, վճարումների էական ուշացումները: Պահուստի մեծությունը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրա գծով ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերի ներկա արժեքի տարբերություն: Անհավաքագրելի դեբիտորական պարտքը դուրս է գրվում պահուստի հաշվին:

Դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստի ստեղծումը, փոփոխությունները, ինչպես նաև դուրս գրված գումարների հետագա վճարումները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.8 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Կազմակերպությունը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Կազմակերպությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

3.9 Պետական շնորհներ

Պետական շնորհները Կազմակերպությունում ճանաչվում են որպես եկամուտ սիստեմատիկ և ռացիոնալ հիմունքով այն ժամանակաշրջանում, որի ընթացքում նրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար ստացվել են:
Ոչ ընթացիկ ակտիվների գնման, կառուցման կամ այլ կերպ ձեռքբերման նպատակով տրամադրված պետական շնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, որը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ և ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
Պետական շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է կազմակերպությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.10 Հասույթ

3.10.1 Ծառայություններ

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, Կազմակերպությունը գործարքից հասույթը ճանաչում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

3.11 Ֆինանսական ծախսեր

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով վճարվելիք տոկոսները: Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, կազմում են այդ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մաս: Որակավորվող ակտիվն այն ակտիվն է, որի համար անհրաժեշտ է զգալի ժամանակահատված, որպեսզի այն պատրաստ լինի ըստ նշանակության օգտագործման (կամ վաճառքի) համար: Այլ փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվում (առաջանում) են:

3.12 Փոփոխություններ հաշվապահական գնահատումներում, նախորդ տարիներին վերաբերող սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

3.12.1 Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

Կազմակերպությունը հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվում է, երբ պահանջվում է ՖՀՄՍ-ներով, կամ եթե այդ փոփոխությունը նպաստում է տնտեսական գործունեության դեպքերի և գործառնությունների՝ առավել ճշգրիտ ներկայացմանը Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը, որը կատարվում է նոր հաշվապահական հաշվառման ստանդարտի ընդունման հետ կապված, կիրառվում է ըստ անցումային դրույթների, եթե այդպիսիք կան տվյալ հաշվապահական հաշվառման ստանդարտում:

Անցումային դրույթների բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է հետընթաց, քանի դեռ դա իրագործելի է: Յուրաքանչյուր առաջացող ճշգրտում հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում ներկայացվում է որպես չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում: Համեմատելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

Հաշվետու տարում հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ տեղի չեն ունեցել, որոնք կարող էին ազդեցություն գործել սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը և սխալների ուղումը կիրառվում է հետընթաց, բացառությամբ այն դեպքերի, երբ անիրագործելի է որոշել կա՞մ այդ փոփոխության ազդեցությունը կոնկրետ ժամանակաշրջանի վրա, կա՞մ դրա կուտակային ազդեցությունը: Յուրաքանչյուր առաջացող ճշգրտում հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում ներառվում է որպես չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում: Համեմատելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ այն իրագործելի է:

3.12.2 Փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունները դրանք ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի կամ ակտիվի պարբերաբար սպառվող մեծության ճշգրտումն է, որն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ընթացիկ վիճակի և դրանց հետ կապված ակնկալվող ապագա օգուտների և պարտականությունների գնահատումից: Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններն առաջանում են նոր տեղեկատվության ստացման կամ նոր հանգամանքների առաջացման հետևանքով և, հետևաբար, չեն համարվում սխալների ուղղում:

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ներառվում է զուտ շահույթի կամ վնասի որոշման մեջ.

ա) փոփոխման ժամանակաշրջանում՝ եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է երկուսի վրա էլ:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն:

Հաշվետու տարում հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունները և նրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված են ծանոթագրություն 4-ում:

3.12.3 Նախորդող ժամանակաշրջանի սխալներ

Նախորդող ժամանակաշրջանի սխալները կազմակերպության մեկ կամ մեկից ավելի նախորդող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում կատարած բացթողումներն ու ոչ ճիշտ ներկայացումներն են, որոնք առաջանում են այն արժանահավատ տեղեկատվությունը չօգտագործելու կամ ոչ ճիշտ օգտագործելու արդյունքում, որը՝

ա) առկա էր, երբ այդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները վավերացվել էին հրապարակման համար.

բ) խելամտորեն ակնկալվում է, որ կարող էր ստացվել և հաշվի առնվել այդ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ներկայացնելիս:

Նախորդող ժամանակաշրջանի էական սխալները ուղղվում են հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո.

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

4. Հիմնական միջոցներ

	Շենքեր և կառուցվածքներ	Մեքենա-սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Առ 01.01.2019թ.	817,361	102,049	12,658	28,373	960,441
Ավելացումներ	3,640	2,965	-	-	6,605
Առ 31.12.2019թ.	821,001	105,014	12,658	28,373	967,046
Ավելացումներ	16,078	443	-	6,864	23,385
Առ 31.12.2020թ.	837,079	105,457	12,658	35,237	990,431
Կուտակված մաշվածություն					
Առ 01.01.2019թ.	165,652	66,785	8,580	21,910	262,927
Մաշվածության ծախս	40,421	12,934	733	-	54,088
Առ 31.12.2019թ.	206,073	79,719	9,313	21,910	317,015
Մաշվածության ծախս	47,481	13,257	733	4,121	65,592
Առ 31.12.2020թ.	253,554	92,976	10,046	26,031	382,607
Հաշվեկշռային արժեք					
Առ 01.01.2019թ.	651,709	35,264	4,078	6,463	697,514
Առ 31.12.2019թ.	614,928	25,295	3,345	6,463	650,031
Առ 31.12.2020թ.	583,525	12,481	2,612	9,206	607,824

5. Առևտրային դեբիտորական պարտքեր

	31.12.2020թ. հազ.դրամ	*31.12.2019թ. հազ.դրամ*
Դեբիտորական պարտքեր վաճառքի գծով	5,472	1,345
Կանխավճարների գծով	646	1,290
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	2,455	2
Դեբիտորական պարտքեր աշխատակիցների գծով	-	1,032
	8,573	3,669

6. Դրամական միջոցներ

	31.12.2020թ. հազ.դրամ	*31.12.2019թ. հազ.դրամ*
Ազգային արտարժույթի դրամարկղ	949	17,744
Հաշվարկային հաշիվներ	11,019	4,855
Արտարժութային հաշիվներ	1,143	899
	13,111	**23,498**

7. Ակտիվներին վերաբերող շեղումներ

	31.12.2020թ. հազ.դրամ	*31.12.2019թ. հազ.դրամ*
Մնացորդը հունվարի 1-ին	**632,336**	**681,440**
Շեղումների ստացում	492	899
Տարվա ընթացքում շահույթում կամ վնասում որպես եկամուտ ճանաչված	(61,783)	(50,003)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**571,045**	**632,336**

8. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2020թ. հազ.դրամ	*31.12.2019թ. հազ.դրամ*
Առևտրական կրեդիտորական պարտքեր	6,257	3,870
Ստացված կանխավճարներ	134	8
Կրեդիտորական պարտքեր հարկերի գծով	1,956	1,212
Այլ կրեդիտորական պարտքեր	7	-
Ընդամենը	**8,354**	**5,090**

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 23.08.2021 14:41